ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ղեկավարի 2016թ.-ի բյուջեի տարեկան հաշվետվություն

17.01.2017թ.

Հարգելի գործընկերներ, ավագանու անդամներ և հրավիրվածներ Ձեզ ենք ներկայացնում Լենուղի համայնքի մեկ տարում կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Գյուղատնտեսություն:

_ Գյուղը իր ուղղվածությամբ համարվում է գյուղատնտեսական, Լենուղի գյուղը ունի 650հա գյուղ նշնակության հողեր, որտեղ հիմնականում մշակվում են պտղատու և խաղողի տեխնիկական սորտի այգիներ: Գարնանը մաքրվել և վերանորոգվել է ներտնտեսային ոռոգման ցանցը՝ շուրջ 35 կմ: Ստացվել է 63,0տ. ազոտական պարարտանյութ (մեկ պարկը 6000 դրամ արժեքով), 7,6լիտր դիզվառելիք (280դրամ լիտր արժեքով) և բաշխվել է բոլոր հողագործներին:

Կրթություն և մշակույթ

Գյուղն ունի վերանորոգված դպրոցի շենք, որտեղ սովորում են 200 աշակերտ: Դպրոցը համալրված է բարձրորակ և որակյալ մասնագետներով: Գյուղապետարանը միշտ իր աջակցությունն է ցուցաբերել դպրոցին: Դպրոցի շենքում գյուղապետարանի հովանավորությամբ գործում է նախակրթարան: Անմխիթար վիճակում է գյուղի կուլտուրայի տունը, որի շենքում է գտնվում նաև գյուղի գրադարանը, որտեղ կա 6600 անուն գիրք: Մշակույթի տունը և գրադարանը վերանորոգման կարիք ունեն:

Տրանսպորտ

Գյուղը ունի 2 կմ միջ տնտեսային ճանապարհ, որը ասվալտապատված է: Գյուղը շրջկենտրոնին և շրջակա գյուղերին կապվում է երթուղային տաքսիների միջոցով, որոնք գյուղից մեկնում են յուրաքանչյուր 20 րոպեն մեկ:

Կոմունալ տնտեսություն

Գյուղում կատարվում է աղբահանության աշխատանքներ շրջիկ աղբահան մեքենայի միջոցով, որը աղբը տեղափոխում է 2 կմ հեռավորության գտնվող աղբանոց: Ընդհանուր ներտնեսային խմելու ջրի խողովակները անցկացվել են 1962թ., որոնք փոփոխման խիստ անհրաժեշտություն ունեն, խմելու ջուրը մատակարարում են խորքային հորերի միջոցով:

Ֆինանսներ

Ներկայացվում է 2016 թվականի բյուջեն եկամուտների և ծախսերի մեկ տարվա կտրվածքով:

Եկամուտների մասով՝ 2016 թվականի բյուջի վարչական մասով նախատեսված 37490,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 31027,2 հազար դրամ, կատարողական 82,7%-ը, որից սեփական եկամուտների՝15647,2 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 9073,7 հազար դրամ, կատարողականը 58%:
Պետբյուջեից ստացված դոտացիա 21842,8 հազար դրամից մուտք է եղել 21842,8 հազար դրամ, այլ ընթացիք դոտացիա 110,7 հազար դրամից մուտք է եղել 110,7 հազար դրամ:

Ներկայացվում է սեփական եկամուտները ըստ հոդվածների

1.Հողի հարկ՝ նախատեսված 7397,2 հազ.դրամից փաստացի մուտքագրվել է 3191,7 հազ.դրամ

2.Գույքահարկ շենք և շինության նախատեսված 380,0 հազ. դրամից փաստացի մուտքագրվել է 240,8 հազ.դրամ

3.Ֆիզ.անձանց և իրավ. անձանց փոխադրամիջոցների գ/հարկ նախատեսված 3600,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 3312,0 հազար դրամ

4.Վարձակալական հողերի վարձավճարից նախատեսված 2320,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 907,2 հազ.դրամ

5.Մատուցվող ծառ. դիմաց վճար նախատեսված 1800,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 1392,8 հազար դրամ

6.Տեղական տուրքեր –նախատեսված 150 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 29,2 հազար դրամ:

Ծախսեր՝

Ներկայացվում է վարչական բյուջեով ֆինանսական ծախսերը ըստ հոդվածների

1.Աշխատավարձի գծով փաստացի ծախս- 17954,5 հազար դրամ

2.Պարգևատրումներ- 99,0 հազար դրամ

3.Երիտասարդական միջ ծախսեր- 1385,8 հազար դրամ

4.Գրասենյակային ծախս-221,0 հազար դրամ

5. Տրանսպորտային ծախս- 800,0 հազար դրամ

6.Կապի ծառայությունների դիմաց ծախս- 393,6 հազար դրամ

7.էլ.էներգիայի ծախս- 6786,4 հազար դրամ

8.Գործուղման ծախս- 53,5 հազար դրամ

9.Տեղեկատվական ծառայությունների դիմաց ծախս- 138,8 հազար դրամ

10.Սոցօգնության ծախս- 1105,0 հազար դրամ

11.Ընդանուր բնույթի այլ ծախս- 100 հազար դրամ

12.Դրամաշնորհի տրամադրում նախակրթական ծրագրին- 576,0 հազար դրամ

13.Մասնագիտական և ներկայացուցչական ծառայության դիմաց ծախս- 82,5 հազար դրամ

14.Համակարգչային ծառայության դիմաց ծախս- 123,8 հազար դրամ

15. Պահուստային ֆոնդի վարչական մասից ֆոնդայինին հատկացվող մուտքեր – 1200,0 հազար դրամ:

Ընդամենը վարչական բյուջեով ծախսեր 31019,9 հազար դրամ

2016 թվականի ֆոնդային բյուջեով նախատեսված կապիտալ վերանորոգման ծախսեր- 3100,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս-1679,0 հազար դրամ, որը ծախսվել է Լենուղի համայնքի խորքային հորերի պոմպերի վերանորոգման նամար;:

Աշխատավարձի և եկամտահարկի գծով պարտքեր – 626,0 հազար դրամ:

Գյուղի հիմնահարցերն են՝

1.Խմելու ջրի ներտնտեսային ցանցի հիմնանորոգում

2.Կուլտուրայի տան վերանորոգում.

3.Մանկապարտեզի շենքի կառուցում:

ԼԵՆՈՒՂՈՒ ԳՅՈՒՂԱՊԵՏ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ